ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ դասախոս՝ Պողոսյան Ա.Վ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Մարդու իրավունքների տեսություն

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.02.7 «Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Մարդու իրավունքների տեսություն» դասընթացը մագիստրատուրայի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է առանցքային տեղ:

«Մարդու իրավունքների տեսություն» դասընթացի շրջանակում ուսանողները կուսումնասիրեն մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների գաղափարախոսության պատմությունը՝ միջնադարից մինչև մեր օրեր, հիմնական իրավունքների ընդհանուր ուսումնքը՝ իրավահամեմատական անցկացնելով Գերմանիայի Դաշնության իրավակարգի հետ, ինչպես նաև ինքնուրույն կլուծեն իրավաբանական խնդիրներ, որի արդյունքում կկարողանան կիրառել տեսական գիտելիքները՝ պրակտիկ խնդիրների լուծման համարս:

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ մարդու իրավունքների վերաբերյալ գաղափարների ծագումնաբանության, պատմության ընթացքում դրանց զարգացման, ժամանակակից հիմնական իրավունքների նշանակության ու պրակտիկայում դրանց կիրառման վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

- ✓ստացած գիտելիքների հիման վրա լուծել իրավաբանական խնդիրների
- ✓ձևավորել մասնագիտական արհեստավարժություն,
- ✓ձևավորել մարդու իրավունքների հիմնախնդիրները վերլուծելու և դրա հիման վրա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու կարողություն:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- ս Հիմնական իրավունքների ծագման ու զարգացման պատմությունը,
- ս Հիմնական իրավունքների և ազատությունների էվոլյուցիան Հայաստանում,
- ս Հիմնական իրավունքների հասկացությունը,
- ս Սուբյեկտիվ-հանրային իրավունքների հասկացությունը,
- ս Հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը,
- ս ՀՀ Սահմանադրության «Հիմնական իրավունքներ և ազատություններ» գլխի կառուցվածքը,
- ս Հիմնական իրավունքների ֆունկցիաները,

- Հիմնական իրավունքների մեկնաբանությունը,
- Հիմնական իրավունքների խախտման ստուգման սխեման:

կարողանա՝

- Հիմնավորել իր տեսակետը մարդու իրավունքների տեսության հիմնախնդիրների վերաբերյալ
- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնական խնդիրների լուծման շրջանակներում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով Սահմանադրության, հիմնական իրավունքների տեսության և պրակտիկայի զարգացումը.

ունակ լինի՝

- Վերլուծել սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող դրույթները.
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.
- Վեր հանել հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ տեսական տարբեր ուղղությունները և հիմնախնդիրները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքների տեսակները	**Ամբողջը, ակ. ժամ.**	**Բաշխում ըստ կիսամյակների**					
		1 Կիս	**2 Կ**	**3 Կ**	**4 Կ**	**5 Կ**	**6 Կ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**140**	**140**					
Լսարանային պարապմունքներ:	32	**32**					
Դասախոսություններ	16	16					
Լաբորատոր աշխատանքներ							
Սեմինարներ	**16**	**16**					
Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**76**	**76**					
քննություններին							

նախապատրաստում							
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**	**քննություն**					

2.3. Առարկայի ծավալը՝ 180 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**

Թեմա 1. Հիմնական իրավունքների ծագման ու զարգացման պատմությունը	**4**	**4**	**4**
Թեմա 2. Հիմնական իրավունքների և ազատությունների էվոլյուցիան Հայաստանում	**4**	**2**	**2**
Թեմա 3. Հիմնական իրավունքների հասկացությունը	**4**	**2**	**2**
Թեմա 4. Սուբյեկտիվ-հանրային իրավունքների հասկացությունը	**4**	**2**	**2**
Թեմա 5. Հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը	**4**	**2**	**2**
Թեմա 6. ՀՀ Սահմանադրության «Հիմնական իրավունքներ և ազատություններ» գլխի կառուցվածքը,	**4**	**2**	**2**
Թեմա 7. Հիմնական իրավունքների ֆունկցիաները	**8**	**2**	**2**
Թեմա 8. Հիմնական իրավունքների մեկնաբանությունը	**4**	**2**	**2**
Թեմա 9. Հիմնական իրավունքների խախտման ստուգման սխեման	**4**	**2**	**2**
Ընդամենը	**40**	**20**	**20**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

Թեմա 1. Հիմնական իրավունքների ծագման ու զարգացման պատմությունը

Մարդու իրավունքների գաղափարների ծագումնաբանական պատմությունը: Magna Carta Libertatum (15.06.1215), Act of Habeas Corpus (1679), Bill of Rights (1689),

Bill of Rights of Virginia (12.6.1776), Ամերիկյան Դաշնային Սահմանադրություն (1787), »Déclaration des droits de l'homme et du citoyen« – 26.8.1789, Մարդու իրավունքների միջազգային և վերազգային պաշտպանություն:

Թեմա 2. Հիմնական իրավունքների և ազատությունների էվոլյուցիան Հայաստանում

Հիմնական իրավունքները խորհրդային սահմանադրություններում, Հիմնական իրավունքները 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում, Հիմնական իրավունքները 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում, Հիմնական իրավունքները 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում

Թեմա 3. Հիմնական իրավունքների հասկացությունը

Հիմնական իրավունքի դրույթ և հիմնական իրավունքներ հասկացությունների տարանջ, Հիմնական իրավունքների պոզիտիվությունը, Հիմնական իրավունքների և մարդու իրավունքների տարանջատումը, Հիմնական իրավունքները որպես սահմանադրությամբ ամրագրված իրավունքներ, Հիմնական իրավունքների նորմատիվությունը, Հիմնական իրավունքների սուբյեկտիվությունը, Հիմնական իրավունքների հասկացության սահմանումը:

Թեմա 4. Սուբյեկտիվ-հանրային իրավունքների հասկացությունը

«Օբյեկտիվ» իրավունք և սուբյեկտիվ իրավունքներ, Հիմնական իրավունքների և հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքների տարբերակումը, Հիմնական իրավունքների երաշխավորման տեխնիկան:

Թեմա 5. Հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը

«Անմիջական գործողություն» հասկացության էությունը և պատմական զարգացումը, Սահմանադրության նորմատիվությունը, Նորմատիվության եվ անմիջական գործողության տարանջատման անհրաժեշտությունը, Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունք, Անմիջական գործողության սահմանումը, Անմիջական գործողության պրակտիկ նշանակությունը, Դատարանների և վարչական մարմինների կողմից Սահմանադրության կիրառման հիմնախնդիրը, Սահմանադրության նորմերի գործողության գերակայությունը և կիրառման աստիճանակարգությունը, Սահմանադրության նորմերի կիրառման աստիճանակարգությունը, Սահմանադրության կիրառումը դատարանների կողմից, Սահմանադրության կիրառումը վարչական մարմինների կողմից

Թեմա 6. ՀՀ Սահմանադրության «Հիմնական իրավունքներ և ազատություններ» գլխի կառուցվածքը,

Սահմանադրության 2-րդ գլխի սիստեմատիկան (տարանջատում ըստ պաշտպանվող բարիքների և դրանց նշանակության; հիմնական իրավունք և հիմնական իրավունքի դրույթի տարանջատում):

Թեմա 7. Հիմնական իրավունքների ֆունկցիաները

Գ. Յելլինկեի տեսությունը (Status negativus, Status positivus ,Status activus), Քառլ Շմիթի «Ինստիտուցիոնալ տեսությունը», Հիմնական իրավունքները որպես բացասական իրավասության նորմեր, Հիմնական իրավունքները որպես օբյեկտիվ արժեհամակարգ (ԳԴՀ ՍԴ), պաշտպանիչ ֆունկցիա, Եռանկյուն հարաբերությունները և հիմնական իրավունքները հարգելու և պաշտպանելու ֆունկցիան, Ձևավորող ֆունկցիա, Օժանդակիչ ֆունկցիա:

Թեմա 8. Հիմնական իրավունքների մեկնաբանությունը

Բառացի/Տառացի մեկնաբանություն, Համակարգային մեկնաբանություն, Պատմական մեկնաբանություն, Իմաստաբանական/Թելեոլոգիական մեկնաբանություն

Թեմա 9. Հիմնական իրավունքների խախտման ստուգման սխեման

Հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանված ոլորտ, հիմնական իրավունքով պաշտպանվող բարիքի սահմանափակում, սահմանափակման հասկացություն, սահմանափակման արդարացում:

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Վ. Պողոսյան/Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Երևան 2016,
2. The Oxford Handbook of Comparative Constitutional Law: Edited by Michel Rosenfeld and András Sajó, 2012,
3. *Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հովհաննես Օդաբաշյան*, Անհատական գանգատ (գիտագործնական ձեռնարկ), Երևան 2023
4. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան, 2024
5. Պողոսյան Վ. / Սարգսյան Ն., Սահմանադրության անմիջական գործողությունը և նորմերի կիրառման աստիճանակարգությունը սահմանադրության գերակայության համատեքստում, Պետություն և իրավունք, N 3 (88), 2020 էջ 124, N 2 (87), 2020, էջ 108
6. R. Alexy, A Theory of Constitutional Rights, Oxford University Press, 2002,

Լրացուցիչ՝

1. Jörn Ipsen, Staatsrecht II, 24., überarbeitete Auflage. 2021.
2. Isensee/Kirchhof, Handbuch des Staatsrechts, Band IX, 2011
3. Carl Schmitt, Verfassungslehre, 11. Auflage 2017,
4. Georg Jellinek, „System der subjektiven öffentlichen Rechte“, 1892.
5. Klaus Stern, Das Staatsrecht der Bundesrepublik Deutschland; Teil: Bd. 3., Allgemeine Lehren der Grundrechte, 1988.
6. Kingreen / Poscher, Grundrechte. Staatsrecht II, 40. Auflage 2024.

բ) Նորմատիվ իրավական ակտեր

1. 1995թ. ՀՀ Սահմանադրություն՝ 2005 և 2015 թ. փոփոխություններով:
2. ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենք (ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին):
3. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք (ընդունված 2018 թվականի հունվարի 17-ին)
4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, (ընդունված 2018 թվականի մարտի 21-ին)

գ)Ինտերնետային կայքեր

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: